



ՄԷԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈՋԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ ԷԶՄԻԱԾՆԷՆ ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

«ԿԱՄԻՄՔ ԶՅԻՍՈՒՍ ՏԵՍԱՆԵԼ...»

Սիրեցեա՛լ ժողովուրդ Հայոց,

Այս տաճարի խորանին վրայ ամենախոնարհ սրտիւ այսօր փառք կուտամ Աստուծոյ, որ այս վերջին Մեր առաքելութիւնը Ինք Իր երկնային օրհնութեամբը սրակեց, եւ կը հաւատամ՝ տուաւ մեզի այն, ինչ որ հայ ժողովուրդի սրտին խորագոյն ընձանքն էր տեսնել ու վայելել Հայ Եկեղեցւոյ միութիւնը եւ միասնութիւնը անխախտ եւ անսասան:

Բոլորդ ալ մամուլէն իմացաք, որ իննօրեայ այցելութեամբ Մենք վերըստին ի Ս. Էջմիածին եւ ի Մայր Հայաստան գտնուելու երջանկութիւնը ունեցանք: Դեռ քիչ առաջ այս րեւէն կարդացուեցաւ այն միասնական խօսքը՝ զոր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Վազգէն Ա. Կաթողիկոսի հետ միասին ուղղեցինք համայն հայ ժողովուրդին՝ ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Կ'ուզեմ որ ամէն մէկ հայ խոր ուշադրութեամբ եւ սրտազգած զգայնութեամբ կարդայ այդ «Համատեղ Հաղորդագրութիւն»ը, հաղորդ դառնայ Վեհափառ Հայրապետներու զգացումներուն, մտածումներուն եւ յառաջիկայի Մեր ծրագրումներուն: Որովհետեւ, Եկեղեցին այնքան զօրաւոր կ'ըլլայ, որքան հովիւ եւ հօտ, Հովուապետ եւ ժողովուրդ իրարմով զիրար կը զօրացնեն եւ իրարմով Եկեղեցին է որ, հայ

սագգն է, որ կ'ամրանայ, կը զօրանայ եւ իր յաղթանակի ճամբուն վրայ քայլ մը առաջ կ'արձանագրէ:

Այսօր, իմ խօսքիս մէջ ես կ'ուզեմ անդրադառնալ երեք հիմնական երեւոյթներու.—

Առաջին, հոգեկան խոր ցնծութեամբ ես նկատեցի, տեսայ եւ նաեւ ճաշակեցի ճշանները Հայաստանի մեր ժողովուրդին մէջ կրօնական առողջ զգացումներու եւ ապրումներու վերազարթօնքին: Նոր դարաշրջան մըն է, որ կը քացուի մեր Հայաստան աշխարհին մէջ. վերակառուցումի, հրապարակայնութեան եւ ժողովրդայնութեան այն մոր ոգին, որ Խորհրդային Միութեան մէջ սկսաւ ծայր տալ ասկէ մէկ-երկու տարի առաջ, հասած է Հայաստան, եւ մեր ժողովուրդը ինքզինք կը զգայ ազատ՝ իր կրօնական եւ սոցալիզմ ապրումները արտայայտելու մէջ: Եւ սա ամէնէն գեղեցիկ երեւոյթներէն մէկն է այսօրուան Հայաստանին:

Այս այցելութեան ընթացքին, Մենք ոչ միայն Ս. Էջմիածնի մէջ, այլ նաեւ Հայաստանի այլ տարածքներուն վրայ տեսանք ժողովուրդին մէջ քրիստոնէական հաւատքին, ազգային կեանքով արտայայտուած հաւատքին վերարթնութիւնը, վերաթարմացումը: Ուրախութեամբ կարդացինք Վազգէն Վեհափառ Հայրապետին կողմէ Մեզի փոխանցուած այն մոր օրինագիծը, որ Խորհրդային վերին Իշխանութիւնները պիտի հաստատեն յառաջիկային եւ որուն նախաքննագիրը դրկուած էր Խորհրդային Միութեան բոլոր կրօնական պետերուն, որպէսզի անոնք կարենան իրենց կարծիքները, մեկնութիւնները եւ թելադրութիւնները ընել նախքան օրինագծին պաշտօնականացումը կամ վաւերացումը: Այդ օրինագծին մէջ արդէն իսկ ճանշըցւած է Եկեղեցին որպէս իրաւական անձ, յատուկ միաւոր՝ իր իրաւունքները եւ պարտաւորութիւնները ունեցող: Մենք յոյսեր կան կապուած այդ օրինագծին, որ երբ պաշտօնապէս վաւերացուի, արդէն իսկ մոր թարմութեան շունչ մը պիտի բերէ ամբողջ Խորհրդային Միութեան մէջ, ուր կրօնքը շատ անշի ազատ կերպով պիտի արտայայտուի, քան ինչ որ եղած էր պարագան անցնող տասնամեակներուն:

Մենք, սակայն, օրինագծին վրայէն չէ որ կը թարգմանենք, մեր ժողովուրդի կրօնական վերազարթօնքի հաւաստիքը, գրաւականը տեսած օրերուն: Ժողովուրդի կեանքին մէջ տեսանք, շօշափելիօրէն զգացինք այդ կրօնական ապրումին ներգործութիւնը: Ոչ միայն Ս. Էջմիածնի մէջ համախմբուած տասնեակ հազարներով ժողովուրդին մէջէն, այլ այս անգամ— եւ փառք կուտամ Աստուծոյ ատոր համար, որ Մենք առիթը ունեցանք երթալու Սիւնեաց աշխարհը, Զանգեզուր—տեսանք մոր արտայայտութիւնը այլ տեղեր եւ այլ եղանակներով: Տեսանք պատմական վանքերը, եւ անոնց պսակը եղող Տաթևի վանքը: Ինչպէս կ'ըսէի այնտեղ, սեպ ժայռերու, անմերձեանի քարձուռներու զագաթին թառած այդ վանքը չես գիտեր երկրի քարերէն է շինուած, թէ երկինքէն է պոկուած: Այնպիսի հաւատքի մը արտայայտութիւնն է այդ վանքին կառուցումը, որ ինծի համար հոգեկան կերպարանափոխութեան առիթ մը եղաւ: Այնտեղ սակայն չտեսանք միայն հին վանքերը, որոնց մէջ հարիւրաւոր, հազարավոր վարդապետներ, հայրապետներ միտք են մշակեր, հոգի են ծաղկեցուցեր ու քարերուն խօսք են տուեր: Քարերը կը խօսէին միմէն հիմա: Ով կը դիտէ այդ վանքերը, քար չի տեսներ վանքերուն մէջ, քարերուն մէջէն քարակոփ վարպետներուն, վարպետներու հոգի տուող վարդապետներուն շունչը կար: Այսօր սակայն, այդ հին վանքերու քարերու կողքին Մենք տեսանք կենդանի՝ քարերը՝ հայ

ժողովուրդը կատուցող, հայ ժողովուրդի նոր ընձիւղները՝ հաւատքով կենւումնակ: Տեսանք տասնեակ հազարներով մեր ժողովուրդի զաւակները, դպրոցական երախաները՝ դպրոցական գոգնոցներ հագած հաւաքուեցան մարզադաշտերու վրայ, ինչպէս Եղեգնաձորի մէջ, ողջունելու համար երկու Կաթողիկոսներս: Տեսանք ժողովուրդը Գորիսի մէջ, Մխիթար Սպարապետ անունով կնքուած հրապարակին վրայ. կարծէք թէ երկինքէն յոյս կը սպասէին, երբ մեր աչքերուն կը նայէին...: Տեսանք ժողովուրդը Տաթևի վանքին մէջ. այդ վանքը երբեք այդպիսի ժողովուրդ չէր տեսած քաներորդ դարուն: Մեկուսացեալ, առանձնացեալ, միայնացեալ վանքը յանկարծ իր ժողովուրդին շունչը զգաց իր քարերուն մէջ. հազարաւոր մարդիկ այդ քարձունքը ելան եւ այնտեղ իրենց աղօթքը խառնեցին իրենց հայրերու դաւաշունչ աղօթքներուն:

Երեւակայեցէ՛ք, հաւատացեալներ, 1903 թուականէն ասդին Կաթողիկոսի ոտք չէր տեսած Սիւնեաց աշխարհը: Վերջին Կաթողիկոսը որ այդ աշխարհը այցելած էր, Խրիմեան Հայրիկն էր, 1903 թուին: Եւ այնտեղ, ուր քար մը քարձրացած է ի յիշատակ իր աջելութեան, այդ քարին երկու կողմերը՝ կանգնեցանք Վազգէն Վեհափառ եւ ես, եւ այնտեղ տեսակ մը ուխտ կատարեցինք այսպէս միացեալ մնալու, ինչպէս եղած էին Խրիմեան Հայրիկ եւ Սահակ Խապայեան Կաթողիկոսներ...:

Մէկ խօսքով՝ Մենք զգացինք Հայաստանի ամբողջ տարածքին վրայ հայ ժողովուրդին վերստին գիտակցութեան գալը իր քրիստոնէական հաւատքի արժէքին հանդէպ: Տեսանք թէ ինչպէս հիմա ազատութիւնը ունին ըսելու, ինչ որ կը տեսնեն, յատկապէս, թէ՛ քրիստոնէական հաւատքը հայութեան կենքին մէջ եղած է ստեղծագործութեան եւ յաղթանակի աղբիւր: Այնտեղ, Մեր կարեւոր մէկ խօսքին մէջ ներկայացուցիչներու տեսակցութեան մը ընթացքին ըրինք գրեթէ քառացիօրէն հետեւեալ հաստատումը.—

Մեր ժողովուրդը փառ հասկցած է քրիստոնէութիւնը, վերջին շրջաններուն, Օսմանեան տիրապետութեան շրջաններուն: Քրիստոնէութիւնը հասկըցած է իբրեւ կրաւորականութիւն, պարտողականութիւն, հաշտութիւն, ոչխարամտութիւն: Այդպէս չէ եղած եւ չէ երբեք քրիստոնէական հաւատքը: Օսմանեան լուծին՝ մեր ժողովուրդի վրայ ճնշումին արդիւնքը եղած է ատիկա: Իրականութեան մէջ այդ հաւատքն է, որ քարերէն տաճար շինեց, կաշիէն մագաղաթ կազմեց, մագաղաթի վրայ անմահութեան գիրերը արձանագրեց յաւիտենական դպրութեան տարեգիրքին մէջ: Սիրելիներ, այդ հաւատքն է որ Վարդանանքը ծնցուց: Այդ հաւատքին ուժը մեր ժողովուրդի դիմադրականութեան աղբիւրը եղած է. եւ ուրախ եմ ըսելու, որ այդ նոր իմաստով հաւատքը այսօր սկսած է վերարժեւորուիլ մեր ժողովուրդի գիտակցութեան մէջ, ի Մայր Հայաստան:

Վանքեր քացուած են. չորս եկեղեցի եւ վանք քացուած են արդէն Ղարաբաղի մէջ եւ Ս. Էջմիածնէն եպիսկոպոս նշանակուած է Արցախի նահանգին համար: Եւ այնտեղ էր ան, վարդապետի մը հետ միասին, ու ճարտարապետական Յանձնախումբի մը ընկերակցութեամբ, առաքած էջմիածնէն՝ զբաղելու համար նորոգութեամբը Ղարաբաղի եկեղեցիներուն, անոնց շարքին նաև՝ Գանձասարի վանքին: Եկեղեցիներ վերաքացուեցան Սիւնեաց նահանգին եւ տակաւին ուրիշ վայրերու մէջ: Կարիքը կայ հոգեւորականի ծառայութեան, իսկապէս հոգեւորականի, որ կարենայ քրիստոնէական հաւատքը եւ ազգային զգացումը իրար ներդաշնակած՝ իր ան-

ձին, իր կեանքին ու իր գործին միջին թարգմանել զԱստուած եւ հայութիւն մեր գալիք մօր սերունդին:

Այս Լ. ամէնէն մեծ կարիքներէն մէկը ներկայ Հայաստանի:

Երկրորդ.—Մենք ւսոյթը ունեցանք տեսնելու անգամ մը եւս Լեւոնականը եւ գացինք այս անգամ մինչեւ Ստեփանաւան, Մեզի ընկերակցող Առաջնորդ Սրբազաններուն եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներուն հետ, որոնք կը բաղկացնէին Մեր պատուիրակութիւնը կամ շքախումբը:

Մենք որ չորս ամիս առաջ եղած էինք Լեւոնական, այսօր պատիւ կ'ընծայենք մեր ժողովուրդին, եւ անգամ մը եւս՝ գնահատանք մեր հայրենի իշխանութեանց, պետութեան եւ բոլոր օգնող օտար Եկեղեցիներուն, օտար կազմակերպութիւններուն, պետութիւններուն եւ Սփիւռքի մեր հայութեան, որ Լեւոնականի մէջ աւերներուն արդիւնքները կամ հետքերը մեծաւ մասամբ վերացուած են. այսինքն՝ քանդուածները մաքրուած են. բայց կան տակաւին հայու ձեռքերով քանդուելիք տեղեր, որոնք երկրաշարժէն վիրաւորուած են, եւ որոնք պէտք է ամբողջութեամբ քանդուին, որպէսզի մեր շինարարութիւնը վերսկսի: Տեսանք, սակայն, Սպիտակը, որ գրեթէ մոյմ վիճակի մէջ է: Ստեփանաւանի մէջ վերակառուցման մեր շունչը արդէն իսկ ծաւալ սկսած է ստանալ. բայց անմիջականօրէն կարիքը կայ մեր ժողովուրդի տեղաւորման՝ երկրաշարժէն վնասուած վայրերու շրջանին մէջ. շրջանէն հեռացողները պէտք է շուտ վերադառնան. անմիջական բնակարաններու կարիքը՝ առաջնահերթ կարիքներէն մէկն է եւ այս ամառուան ընթացքին պէտք է որ մեծ մասը գոնէ շինուած ըլլայ այդ առժամեայ բնակարաններէն, որպէսզի ժողովուրդը ձմեռուընէ առաջ կարենայ տեղաւորուիլ իր հայրենի հողին վրայ եւ լծուի աշխատանքի:

Արտասահմանի հայութեան բոլոր այն թեմերը, բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք յանձնառութիւններ ունին ընելիք, թող շուտ շարժին եւ անմիջականօրէն գործի լծուին, որպէսզի թէ՛ տեղաւորման գործին օգնեն եւ թէ՛ նաեւ տնտեսական զարգացումին օժանդակեն, որովհետեւ այնտեղ ինչ որ կ'ընենք, հայութեան, ամբողջական եւ մէկ հայութեան ապագային համար է որ ըրած կ'ըլլանք, մենք մեզի համար է որ ըրած կ'ըլլանք: Եւ այնտեղ փոքրիկ ճշդում մը կատարեցի երբ պետական իշխանութեանց հետ խորհրդակցութեան ճառանք՝ վերակառուցման գործով: Ըսի.—մեր արտասահմանի հայութեան բերելիք բաժինը մի՛ նկատէք եւ մի՛ բնորոշէք որպէս օժանդակութիւն, այլ նկատեցեք մասնակցութիւն. որովհետեւ մենք մեր տունն է որ կը շինենք եւ ոչ թէ ուրիշին տունը: Օտարը նպաստ կուտայ, իսկ մենք մասնակից կը դառնանք: Այս հոգեբանութեամբ, այս գիտակցութեամբ է որ մենք պէտք է բերենք մեր մասնակցութեան բաժինը: Ես վստահ եմ որ միջոցական ահաւոր կարիքին դիմաց մեր բերելիքը մեծ բան պիտի չըլլայ միջոցական արժէքի տեսակէտէն. բայց շատ մեծ նշանակութիւն պիտի ունենայ՝ բարոյական, ազգային իմաստով: Մեր ժողովուրդը այնտեղ մեծ հաւատք ունի Սփիւռքի հայութեան հանդէպ: Ունէ մէկ դրական արար՝ միասնական ոգիով տարուած, Հայաստանի հոգեկան եւ ազգային վերակառուցումին կը նպաստէ, ոչ թէ միայն միջոցական վերաշինութեան, միջեղէն վերակառուցումին: Այս գիտակցութեամբ է որ այս սուրբ բեմէն կոչ կ'ողղեմ մեր բոլոր թեմերուն, եւ բոլոր քարեսիրական կազմակերպութիւններուն, որոնք յանձնառութիւններ ունին հանդէպ մեր Հայաստանին, շուտ կատարեն, արագ շարժին, որպէսզի կարենան մեր հայրեն-

նիքի վերականգնումը տեսնել անմիջականորեն եւ ոչ թէ սպասել տարինե՛ր ու տարիներ:

Սիրելի՛ք, երրորդ երեւոյթը, որուն կ'ուզէի անդրադառնալ, կրօնական վերազարթօնքէն եւ հայրենի աշխարհի աւերեալ շրջաններու վերականգնումի երեւոյթէն ետքը, Ապրիլ 24-ի ոգեկոչումն էր Հայաստանի սուրբ հոգին վրայ:

Բոլորդ ալ գիտէք որ աննախընթաց դէպք մըն էր այս Մեր կեանքի եւ Մեր Կաթողիկոսութեան պատմութեան մէջ: Իմ ծանօթութեանս մէջ, առաջին անգամն էր որ Կիլիկիան Աթոռի Կաթողիկոս մը պատարագ կը մատուցէր Ս. Էջմիածնի խորանին վրայ. ոչ թէ Անթիլիասեան շրջանի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ, այլ՝ 1441-էն առիկն, 540 տարիներէ ի վեր: Իսկապէս, պատմական, յուզիչ եւ խորիմաստ նշանակութիւն ունեցող դէպք մըն էր այդ: Այնտեղ քարոզիս մէջ Վազգէն Վեհափառին դառնալով ըսի.— «Վեհափառ՛ն, ես միշտ Ապրիլ 24-ի նահատակներուն հետ տարեկան ժամադրութիւնս ապրած եմ Անթիլիասի մէջ, իրենց մատուցներուն Յուշարձանին դիմաց: Ամէն հայ մարդ տարին մէկ անգամ ժամադրուած կ'ըլլայ իր նահատակներուն հետ: Այս տարի, այդ ժամադրութիւնը կ'ապրիմ Հայաստանի հողին վրայ, Ս. Էջմիածնի մէջ, եւ վաղը պիտի ապրիմ Ծիծեռնակաբերդի Յուշարձանին առջեւ»:

Պէտք էր որ տեսնէիք այդ ժողովուրդի վերաթմացումը՝ մեր հայ ժողովուրդի Նդեռնի տագնապէն ետքը վերականգնումի կամքին վերապրկումը: Ծիծեռնակաբերդ քարձրացանք Վազգէն Վեհափառին հետ միասին, եւ ես աչքերովս տեսայ հարիւր-հազարաւոր հայ ժողովուրդի զաւակներ, թողած իրենց գործը, ծաղիկ մը ձեռքերնին, Երեւանի փողոցներէն քալելով կը քարձրանային դէպի Ծիծեռնակաբերդ, այդ ծաղիկը դնելու համար Յուշարձանի անմար կրակին դիմաց: Հարիւր-հազարաւոր երբ կ'ըսեմ, երեւակայութեամբ մտաբերեցէք պիքները մեր ժողովուրդի գնացքին: Քայլուածք չէր. գնացք էր, պիք էր: Եւ յուզում մը կար աչքերնուն մէջ:

Բարեկամնե՛ր, հաւատարմութիւնը ազգի մը յաղթանակին ամէնէն կարեւոր ուժն է. ով որ հաւատարիմ չէ այն բանին որ չի մեռնիր, ինքը կը մեռնի. բայց լաւ է որ ինքը մեռնի եւ չմեռնելիքը չմեռնի, նահատակները չմեռնին, նահատակութեան գաղափարը չմեռնի: Ես Հայաստանի ժողովուրդին մէջ տեսայ այդ հաւատարմութիւնը՝ իր ժողովուրդի արդար դատին նկատմամբ: Սուգի օր չէր, թէւ տրտմութիւն կը տիրէր բոլորի հոգիներուն մէջ: Այդ ժողովուրդի միասնական ժամադրութիւնը նահատակներուն հետ եւ նահատակներու ժամին վերյառնումը իրենց կեանքին մէջ, իմ սիրտս ամրացուց, իմ հաւատքս զօրացուց Հայաստանի ապագային նկատմամբ: Ի՞նչ գեղեցիկ էր—եւ Մեր «Համատեղ Հաղորդագրութեան» մէջ նշեցինք ատիկա,—որ մեր հաշրենի պետութիւնը վերջապէս այս տարի առաջին անգամ ըլլալով պաշտօնապէս ազատ օր հռչակեց ժողովուրդին համար Ապրիլ 24-ը: Արդէն ժողովուրդը ասկէ առաջ գործի չէր երթար, ինչպէս կ'ըսէին ինձի շատ մը բարեկամներ Հայաստանի մէջ. բայց, մեծ է իմաստը այն որոշումին որ Խորհրդային Հայաստանի պետութիւնը, իր Խորհրդարանով կը սահմանէր որ Ապրիլ 24-ը անցնի ազգային տօներու շարքին, եւ ազատ օր հռչակուի ամբողջ ժողովուրդին համար:

Մենք առիթը ունեցանք տեսնուելու Խորհրդային Հայաստանի Նախագահին հետ, Վազգէն Վեհափառի հետ միասին: Ուրախ եմ հաստատելու, որ հայրենի պետութեան գլխաւոր դէմքը եւ իր օգնականները ազգային

առողջ ըմբռնումի տեր մարդիկ են եւ կ'ընեն այն ինչ որ իրենց կարելիութեան սահմանին մէջ է: Մենք կը սպասենք, եւ յայտնեցինք ալ այնտեղ Մ'եր սպասումը, որ որքան աւելին ընեն, այնքան աւելի զօրավիզ կը գրտնեն ամբողջ արտասահմանի մէջ: Ծանր պահ մը կայ տակաւին. վիրաւոր կէտ մը կայ հայ ժողովուրդի սրտին մէջ. ոչ թէ Լեւինականի աղէտին վերքը միայն, այլ նաեւ մեր ժողովուրդի ընտիր զաւակներէն ոմանց բանտարկութեան վերքը: Յայտնեցինք Մ'եր տեսակետը, յայտնեցինք Մ'եր փափաքը, եւ խնդրեցինք, որ օր առաջ անոնք ալ դուրս գան բանտէն եւ թերեւ իրենց բաժինը իրենց հայրենիքի վերականգնումին մէջ. մտաւորական դէմքեր, նախաձեռնող ղեմքեր, հայապաշտ ղեմքեր, եւ երբեք՝ հակապետական ղեմքեր:

Մենք կը հաւատանք որ մօտ ատենէն այդ ալ տեղի կ'ունենայ, որովհետեւ շատ բան կը փոխուի այդ երկրին մէջ, եւ կը սպասենք որ մօտաւորագոյն ժամանակին նաեւ այս ուրախութիւնը վայելէ ամբողջ հայ ժողովուրդը՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Սիրելիներ, այսօր իմ խօսքս կ'ուզեմ փակել, այսօրուան Աւետարանէն կարդացուած տողի մը վերյիշումով: Գիտէք այսօր «Երկրորդ ծաղկազարդ» կը կոչուի մեր Եկեղեցւոյ տօնակարգին մէջ. որովհետեւ շարականները, Աւետարանները, որոնք կարդացուեցան, Յիսուսի Երուսաղէմ մուտքի դրուագին կը վերաբերէին: Այսօր նաեւ ազգային այն գեղեցիկ աւանդութիւնը կը վերակոչենք, ըստ որում հրեշտակ մը ամեն օր երկինքէն կ'այցելէր Ս. Գրիգոր Լուսաւորչին, երբ անհկա խոր Վիրապին մէջ կը գտնուէր: Եւ Համբարձումէն ետքը, չորրորդ օրը, հրեշտակը չեկաւ, որովհետեւ Յիսուսը ընդունած էին չորրորդ դասու հրեշտակները այդ օրը երկինքին մէջ:

Յիսուս Երուսաղէմ մուտքի ատեն, երբ հսկայ բազմութիւն մը զինք կը դիմաւորէր, ինչպէս գիտէք, այդ բազմութեան մէջէն քանի մը հոգիներ կային, որոնք հեթանոս էին, այսինքն՝ հրեայ չէին. ասոնցմէ մէկը մօտեցաւ Փիլիպպոս Առաքեալին, ըսաւ. — «Կամիմք զՅիսուս տեսանել» — կ'ուզենք Յիսուսը տեսնել: Փիլիպպոս Առաքեալ գնաց Անդրէաս Առաքեալի մօտ, որ Յիսուսի աւելի մօտիկ անձ կ'երեւէր եւ ըսաւ. — այս մարդիկը կ'ուզեն Յիսուսը տեսնել: Անդրէաս Յիսուսին գնաց եւ ըսաւ. — «Հեթանոսներ կան, ոչ հրեաներ, որոնք կ'ուզեն քեզ տեսնել». այն ատեն Յիսուս ըսաւ. — «Ահա եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի Մարդոյ». եթէ Հեթանոսներ կ'ուզեն զիս տեսնել, ուրեմն եկած է ժամանակը որ Աստուծոյ Որդին փառաւորուի, ճանչցուի իր աստուածութիւնը:

«Կամիմք զՅիսուս տեսանել»...:

Այն որ իր սրտին մէջ Քրիստոսի ներկայութիւնը ունի եւ անոր իղձը ունի, այդ անձը քրիստոնէական հաւատքի եւ կեանքի տեսակետէն ամէնէն վաւերական մարդն է: Ոչ թէ Յիսուս ինք կուգայ մեզի, այլ մենք կ'երթանք Յիսուսին: Քրիստոնէական հաւատքը մեր հոգիին ձգտումն է, ոչ թէ միայն վերէն տրուած շնորհ մը եւ պատիւ մը:

Ես գացի Հայաստան եւ առանց բառերը գործածելու, ըսի, կարծեք թէ հոգիս մէջէն, լուռ ձայնով. — «Կամիմք զՅիսուս տեսանել»: Եւ՝ տեսա՛յ Յիսուսը Ս. Էջմիածնի մէջ, տեսա՛յ զայն Իջման Սեղանին առջեւ: Ծունկի եկայ եւ համբուրեցի այն տեղը, ուր Ինքը Իր ոսկի ուռնակը (մուրճը) խփեր էր գետնին եւ ցոյց տներ Հայաստանի առաջին եկեղեցիին տեղը: Հաւատք ունեցէք: Ես Յիսուսը ուզեցի տեսնել: Եւ՝ տեսա՛յ ... տեսա՛յ Տաթևի վանքին

մէջ: Յիսուսը ուզեցի տեսնել: Եւ՝ տեսա՛յ մեր ժողովուրդի վերականգնումին մէջ, այն տասնեակ հազարներով մանուկներու աչքերուն մէջ, որոնք յոյս կը փնտռեն երկինքէն, յոյս կը փնտռեն իրենց հայրերէն, եւ ճամբայ կը փնտռեն իրենց ժողովուրդի կեանքը տանելու հո՛ւն, ուր Աստուած եւ Հայրենիքը կը կանչեն:

• •

Այսօր, եղբայրներ եւ քոյրեր, Լիբանանի մէջ մենք ծանր օրերու մէջէն կ'անցնինք: Դուք տեսաք «Համատեղ Հաղորդագրութեան» մէջ, որ վազգէն վեհափառը եւ Մենք յատուկ խօսք ուղղեցինք լիբանանահայութեան այս տագնապալի օրերուն մէջ: Եկէք ամուր պահենք այդ քրիստոնէական եւ ազգային մեր հաւատքը այստեղ, որուն կարիքը ունինք այնքան: Ես մորոգունցայ, ես զօրացայ տեսնելով Սիւնեաց աշխարհը, ու մտքովս անցան պատմական այն դէպքերը, որոնք քանդիչ էին ու քանդիչ եղան Հայաստանի մէջ: Երկու անգամ երկրաշարժը քանդեց Տաթևի վանքը ամբողջութեամբ, եւ սակայն ան վերանորոգւեցաւ: Սելճուքները, թաթարները եւ ուրիշ տեսակ-տեսակ օտար ուժեր եկան, քանդեցին, ջնջեցին, տասը հազար ձեռագիր սպաննեցին. բայց ժողովուրդը չմեռաւ, որովհետեւ ժողովուրդի հաւատքը չմեռաւ, ոգին չմեռաւ, յոյսը չմեռաւ, սէրը չմեռաւ:

Մենք սկսեք ենք դառնալ մեղկ, մեղկ, թուլասիրտ:

Այո՛, ես չեմ թերագնահատեր տագնապին ահաւորութիւնը: Ռումբին դիմաց քաջութիւնը անհմաստ է: Բայց երբեմն կը տեսնեմ, որ մեր ժողովուրդին մէջ թուլամորթութիւն մը սկսած է ծայր տալ. աշխատանքէ փախելու, ազգային պարտականութիւնները կատարելու մէջ թուլութիւն մը յառաջ եկած է: Ոմանք պատրուակի կը վերածեն այս տագնապը: Ոմանք կը մտնին թուղթ կը խաղան, խմիչք կը գործածեն, իբրեւ թէ՝ կը փախին ռումփերու սարսափէն. այո՛, տագնապը տագնապ է, ես ալ կ'ապրիմ գայն. բայց պէտք է ըլլալ արի եւ տոկուն: Ծատ փորձանք տեսեր է այս ժողովուրդը: Եօթանասուն տարի Սիւնեաց աշխարհին մէջ եկեղեցիները լոնր էին. ժողովուրդը արթնցաւ, մորոգունցաւ: Ի՛նչ, ի՛նչ ծանր տագնապներու մէջէն անցած է այդ ժողովուրդը, բայց կրցած է տոկալ: Հայու մեր անունը եթէ հոմանիշ մը ունի, այդ տոկալն է. հայ եւ տոկալ, հոմանիշ՝ իրարու: Մենք պէտք է այս պատիւը բարձր պահենք. ժուժկալ ըլլանք, անհրաժեշտէն անդին չանցնինք, եւ զգոյշ, հեռատես, խոհական բայց արի կեցուածքով մեր անունը արժեցնենք լիբանանեան այս տագնապին մէջ:

Մեր Ազգային Առաջնորդարանը, մեր բարեսիրական հաստատութիւնները ամէն ինչ կ'ընեն, փաստերով կը խօսիմ, որ մեր ժողովուրդի կարիքներուն հասնին. բայց ժողովուրդը ինք ալ պէտք է գիտնայ ինքզինքին տէր ըլլալ եւ ոչ թէ խաբուսիկ, վաղանցուկ, մակերեսային, յիմար երեւոյթներու ետեւէն վազել: Ինչպէս մեր «Համատեղ Հաղորդագրութեան» մէջ ըսած էինք, Հայաստանի մէջ ալ թուլամորթներու դասակարգ մը կայ, որ հայրենի հողը կը լքէ. այս օրերուն մանաւանդ, երբ բարեկարգութեան շունչը փչած է հայ հողին վրայ, լքել հայրենի հողը, թուրքին դաշնակից ըլլալ է, թշնամիին հացին իւղ քսել է: Այո՛, պէ՛տք է հրապարակաւ ըսել ասոնք, պէ՛տք է պայքարիլ ասոր դէմ:

Հայ ժողովուրդին համար թուլութիւնը մահուան ճամբան է: Ուստի, եկէք բոլորս միասին տագնապին դիմաց առոյգ կենանք, գիտակից, խոհեմ, բայց

արի եւ ոչ թէ ընկճուող: Կամաւորապէս զրկուիլը՝ պատիւ է, երբ գիտակցականօրէն կ'ըլլայ:

Ուստի, եղբայրներ եւ քոյրեր, այսօր, Հայաստանէն վերադարձիս այս անդրանիկ խօսքիս մէջէն ես կոչ մը կ'ողողեմ ամբողջ մեր ժողովուրդին՝ այստեղ եւ ի սփիւս աշխարհի, որ այլեւս անխախտելի, անստուն եւ անփոշի մնայ հայութեան միութիւնը: Երբ կը տեսնէք Հայաստանը, Հայաստանի հողը, Հայաստանի վանքերը, Հայաստանի մոր կառուցումները, հարց կուտաք. ասոնց դիմաց մենք չենք կրնար մէկ չըլլալ. միայն կրնանք մէկ ըլլալ: Տաթևի վանքը որո՞ւ կը պատկանի, Գանձասարի վանքը որո՞ւ կը պատկանի, Էջմիածնի՞ն թէ Ամթիլիսիւն. երկուքին: Ծիծեռնակաբերդը որո՞ւ կը պատկանի, Երեւանի՞ հսկութեան. ո՛չ ամբողջ հայութեան. այդ ամբողջ բառը մենք կը գործածենք որպէս հոմանիշ բաղարջի: Մենք հացի կտորուանք չենք. ազգ ենք, ոչ թէ բեկորներ ազգի: Այս գիտակցութեամբ թուլ ամբանայ ձեր մէջ տոկունութեան եւ արիութեան կամքը, վերապրկուի ձեր մէջ:

Եւ այն ատեն եկէք ըսենք միասին. «Կամիմք գծիսու տեսանել»: Եւ հրեշտակը կուգայ եւ ինչպէս այցելեց Գրիգոր Լուսաւորչին, այսօր հրեշտակները կ'այցելեն ի Հայաստան այս մոր շունչին մէջ: Եկէք մենք ալ հաւատքին հաւատարմութիւնը վերապրինք Աստուծոյ փառքին, մեր Եկեղեցւոյ շինութեան եւ մեր ազգի զօրացման համար. Ամէն:

